ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԱՆԴՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Ուշագրավ վավերագրեր ՀՅԴ գործիչներ Հակոբ Զավրյանի և Լիպարիտ Նազարյանի ձերբակալության վերաբերյալ*

ՀՅ Դաշնակցության նշանավոր գործիչներ բժիշկ Հակոբ Զավրյանը (Զավրիև)[1] և Լիպարիտ Նազարյանը[2] 1918 թ. օգոստոսի 29-ին Մոսկվայում ձերբակալվել կամ ավելի ճիշտ՝ պատանդ էին վերցվել խորհրդային իշխանությունների կողմից:

Վերջիններս Բաքվի դաշնակցականներին մեղադրում էին Բաքվի Կոմունայի բոլշևիկ ղեկավարների՝ Ստեփան Շահումյանի[3] և նրա գործընկերների, ինչպես նաև Ս. Շահումյանի երկու որդիների՝ Սուրենի[4] ու Լևոնի[5] և տիկին Զափարիձեի[6] բանտարկության մեջ, ինչն իրականացրել

*Ընդունվել է տպագրության 20.05.2014:

1 **Զավրյան (Զավրիյան, Զավրիև) Հակոբ Քրիստափորի**– ՀՅԴ անդամ, բժշկագիտության դոկտոր, Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ՝ կամավորական շարժման ակտիվ մասնակից: Ավարտել է Սանկտ-Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան: 1917 թ. մեծ ներդրում է ունեցել Արևմտյան Հայաստանի վերաշինության կազմակերպման գործում որպես պատերազմի իրավունքով նվաճված տարածքների գեներալ-կոմիսարի քաղաքացիական գծով օգնական: Եղել է Ռուսաստանի Սահմանադիր ժողովի և Անդրկովկասյան Սեյմի անդամ, 1917 թ. Հայոց ազգային համախորհրդակցության մասնակից: 1918 թ. Լ. Նազարյանի, Ա. Չիլինգարյանի հետ միասին Մոսկվայում էր կուսակցական հանձնարարությամբ: Ձերբակալվել և հարկադիր աշխատանք է կատարել հիվանդանոցում: Այստեղ վարակվել է բծավոր տիֆով և վախճանվել 1920 թվականի փետրվարի 20-ին:

2 **Նազարյան Լիպարիտ Հովհաննեսի** (նաև՝ Հակոբյան Սարգիս, Ռ. Լեոնյան, 1868–1947) – լրագրող, իրավաբան, ՀՅԴ անդամ: 1918 թ. երկու անգամ հայկական պատվիրակությունների կազմում մեկնել է Գերմանիա՝ դիվանագիտական բանակցություններ վարելու նպատակով: Նույն թվականին Մոսկվայում շփումներ է ունեցել խորհրդային ղեկավարների հետ՝ Հայկական հարցի և Ստեփան Շահումյանի հետ կազմված բոլշևիկների հետ համագործակցության ծրագրի շրջանակներում, սակայն ձերբակալվել և խորհրդային բանտում է պահվել 1918–1919 թթ.: Հետագայում տարագրության մեջ շարունակել է լրագրողական աշխատանքը, եղել է «Ցուսաբեր»-ի (Եգիպտոս) խմբագիր, զբաղվել է թարգմանությամբ:

3 **Շահումյան Ստեփան Գևորգի** (1878–1918) – Ռուսաստանում և Անդրկովկասում բոլշևիկյան կուսակցության ղեկավար գործիչ, մարքսիստական ուսմունքի տեսաբան:

4 **Շահումյան Սուրեն Ստեփանի** (1902–1936)–ԽՍՀՄ ռազմական գործիչ, Ստեփան Շահումյանի ավագ որդին:

5 **Շահումյան Լևոն Ստեփանի** (1904–1971)–խորհրդային կուսակցական աշխատող, լրագրող, պատմաբան, կոմունիստական կուսակցության անդամ, Ստեփան Շահումյանի միջնեկ որդին:

6 **Զափարիձե (Խոջայանց) Վարվառա Մելիքսեդեկի (Միքայելի)** (1886–1952) – Անդրկովկասում հեղափոխական շարժումների մասնակից, բոլշևիկյան կուսակցության անդամ, բոլշևիկ Պրոկոպի Զափարիձեի կինը:

ՀՅԴ Համահայկական դաշնակցության Ազգային արխիվ, հատոր 2 (46), ամսագիր-հանդես, 2014

էին անգլիական զինվորական իշխանությունները Բաքու մտնելուց անմիջապես հետո:

Այս միջադեպի արդյունքում փակուղի մտավ 1917 թ. վերջերից Անդրկովկասում սկսված ՀՅ Դաշնակցության ու Ռուսաստանի խորհրդային իշխանության տեղական ներկայացուցիչների համագործակցությունը, որի հիմքերը դրվել էին 1918 թ. հունվարի վերջին՝ Թիֆլիսում Կովկասի գործերի արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի հետ դաշնակցական գործիչների բանակցությունների արդյունքում: Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում Ռուբենը (Մ. Տեր-Մինասյան)[7] իր հայտնի հուշերում: Դաշնակցական զինվորների պաշտպանությամբ Գանձակից Թիֆլիս անցած Ստ. Շահումյանը Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի ներկայացուցիչներ Ռուբենի և Հ. Ջավրյանի հետ բոլշևիկ Դանուշ Շահվերդյանի[8] տանը տեղի ունեցած երկու հանդիպման ընթացքում մշակել էին համագործակցության մանրակրկիտ ծրագիր, որին տեղյակ էր նաև Արամ Մանուկյանը[9] Երևանի Հայոց ազգային խորհրդում: Ծրագիրն ընդգրկում էր ռազմաքաղաքական բնույթ ունեցող միջոցառումների մի ամբողջ համալիր, որի նպատակը խորհրդային իշխանության հաստատումն էր ողջ Անդրկովկասում և Կովկասյան ճակատի համատեղ պաշտպանությունը թուրքական հարձակումից: Սակայն, քանի որ Ստ. Շահումյանին չհաջողվեց կասեցնել Ռուսաստան հեռացող զորքերի գոնե մի մասին, քիչ անց ՀՅԴ–բոլշևիկներ համագործակցության համար անհրաժեշտ պայմաններ ստեղծվեցին միայն Բաքվում:

Հենց Ստ. Շահումյանի հետ կազմված այդ ծրագրի իրականացման նպատակով էր, որ Հ. Ջավրյանը «անցաւ Մոսկուա, որտեղ իբրև պատանդ պիտի պահուէր Շահումեանի դիմաց, թէև Ջաւրիևը փաստօրէն հոն գացած էր Շահումեանի կիսատ թողած գործը գլուխ հանելու համար»[10]:

Իսկ 1918 թ. օգոստոսի 29-ին Հ. Ջավրյանի հետ միասին Մոսկվայում ձերբակալված Լիպարիտ Նազարյանը Ռուսաստան էր մեկնել դեռևս Փետրվարյան հեղափոխությունից հետո: Այնուհետև նրան էր միացել բժիշկ Հ. Ջավրյանը և երկուսով՝ որպես Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներ, հարաբերություններ էին հաստատել Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության հետ: Հարաբերությունները շարունակվեցին նաև խորհրդային իշխանության օրոք, երբ Հ. Ջավրյանն արդեն վերադարձել էր Կովկաս, իսկ Լ. Նազարյանը, մնալով Պետրոգրադում ու

---

7 **Ռուբեն (Տեր-Մինասյան Մինաս)** (1882–1951) – հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, ՀՅԴ անդամ: Սովորել է Գևորգյան ու Լազարյան ճեմարաններում և Ժնևի համալսարանում: Մասնակցել է հայդուկային կռիվներին, ղեկավարել Սասունի ինքնապաշտպանությունը (1915 թ.): 1917–1918 թթ. ղեկավար դեր է խաղացել գաղթական հայ բնակչությանը Հայաստանում բնակեցնելու գործում: Եղել է Հայաստանի Հանրապետության 1-ին և 2-րդ խորհրդարանների անդամ, վարել է նախարարի պաշտոն: Կուսակցության մի շարք Ընդհանուր ժողովների մասնակից, բազմիցս ընտրվել է ՀՅԴ Բյուրոյի կազմում:

8 **Շահվերդյան Դանիել (Դանուշ) Ալեքսանդրի** (1882–1941) – բոլշևիկյան կուսակցության անդամ: Սիմոն Ջավարյանի համագյուղացին ու ազգականը: Ավարտել է Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Խորհրդային Հայաստանի պետական գործիչ:

9 **Մանուկյան Արամ (Հովհաննիսյան Սարգիս)** (1879–1919) – ՀՅԴ ակնավոր գործիչ, Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի անդամ, Երևանի Հայոց ազգային խորհրդի ղեկավար, Հայաստանի Հանրապետության հիմնադիր, ներքին գործերի նախարար:

10 **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. է, Թէհրան, 1982, էջ 143–144:

Մոսկվայում և օգտվելով Լ. Տրոցկու[11] հետ իր վաղեմի ծանոթությունից, մի քանի անգամ այցելել էր նրան՝ փորձելով կանխել Բրեստ-Լիտովսկի բանակցությունների հակահայ ընթացքը:

Բաքվի Հայոց ազգային խորհուրդը 1918 թ. ապրիլի 20-ին Մոսկվա էր ուղարկել նաև ՀՅԴ գործիչներ Արտաշես Չիլինգարյանին[12] և Սիմոն Հակոբյանին[13]՝ հանձնարարելով, որ Ա. Չիլինգարյանը և Լ. Նազարյանը հարաբերություններ հաստատեն Բեռլինի հետ, իսկ Ս. Հակոբյանը գործելու էր Մոսկվայում՝ կազմակերպելու համար Խորհրդային Ռուսաստանի օգնությունը:

1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին Լ. Նազարյանը Գերմանիայում էր՝ Գևորգ Մելիք-Ղարագյոզյանի[14] և Արշակ Ջամալյանի[15] հետ՝ որպես Հայոց ազգային խորհրդի կողմից գործուղված պատվիրակության անդամներից մեկը: Նա Բեռլին էր ժամանել ապրիլի 22-ին, իսկ այնտեղից մեկնել մայիսի 30-ին: Գ. Մելիք-Ղարագյոզյանը և Ա. Ջամալյանը Կիևով հունիսի 8-ին վերադարձել էին Թիֆլիս, իսկ Լ. Նազարյանը բռնել էր Մոսկվայի ճանապարհը:

Մինչ այդ՝ 1918 թ. մարտի վերջերից Բաքվում սկսել էր իրականություն դառնալ ՀՅԴ-բոլշևիկներ համագործակցության ծրագիրը: Այստեղ իշխանության համար անզիջում պայքար էր ընթանում Բաքվի խորհրդի բոլշևիկյան ղեկավարության և Մուսավաթի միջև: Այդ պայմաններում Բաքվի Հայոց ազգային խորհուրդը հայտարարել էր իր չեզոքության մասին և մարտյան կռիվների շրջանում մեծ ջանքեր գործադրել մահմեդական բնակչության պաշտպանության ուղղությամբ: Սակայն, երբ թաթարական խառնամբոխը հարձակում սկսեց հայկական թաղամասերի վրա, ռազմաճակատից երկաթուղով Բաքու հասած հայ զինվորականներից կազմված

---

11 **Տրոցկի Լև Դավիդովիչ (Լեյբա Դավիդովիչ Բրոնշտեյն**, 1879-1940) – 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման կազմակերպիչներից և Կարմիր բանակի ստեղծողներից մեկը: 1918-1925 թթ. Խորհրդային Ռուսաստանի ռազմածովային ուժերի ժողկոմ և Ռազմահեղափոխական խորհրդի նախագահ: ՌԿ(բ)Կ քաղբյուրոյի անդամ, մարքսիզմի տեսաբան և նրա հոսանքներից մեկի՝ տրոցկիզմի գաղափարախոս (ծայրահեղ ձախ հայացքների ջատագով):

12 **Չիլինգարյան Արտաշես (Դարբինյան Ռուբեն)** (1883-1968) – հասարակական-քաղաքական գործիչ, լրագրող, ՀՅԴ անդամ: Ավարտել է Մոսկվայի համալսարանը: 1917 թ. ընտրվել է Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեի անդամ, Բաքվի Հայոց ազգային խորհրդի քարտուղար: Մասնակցել է 1917 թ. Հայոց ազգային համախորհրդակցությանը Թիֆլիսում: 1918 թ. մայիսին, կուսակցության որոշմամբ մեկնել է Մոսկվա՝ Բաքվի պաշտպանության համար խորհրդային կառավարությունից օգնություն խնդրելու նպատակով: Բեղմնավոր գործունեություն է ծավալել Սփյուռքում, մանավանդ «Հայրենիք» ամսագրի ու համանուն օրաթերթի հրատարակության ընթացքում:

13 **Հակոբյան Սիմոն Հարությունի** (1880-1939)- ՀՅԴ անդամ, գրականագետ, Ավստրո-Հունգարիայում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ: 1920 թ. բանակցություններ է վարել Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների հետ: Հետագայում աշխատել է Երևանի պետական համալսարանում:

14 **Մելիք-Ղարագյոզյան Գևորգ (նաև՝ Խաչատուր Սիմոնյան)** (1873-1940) – հայ հասարակական-քաղաքական գործիչ, ավարտել է Թիֆլիսի դասական գիմնազիան, բարձրագույն կրթությունը ստացել է Բեռլինի և Բրյուսելի համալսարաններում: 1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին Հայոց ազգային խորհրդի պատվիրակության կազմում այցելել է Գերմանիա: 1918-1919 թթ. վարել է Հայաստանի Հանրապետության լուսավորության նախարարի պաշտոնը:

15 **Ջամալյան (Իսահակյան) Արշակ Ջամալի** (1882-1940) – հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ: Բարձրագույն կրթությունը ստացել է Բեռլինի և Լայպցիգի համալսարաններում: 1917 թ. Հայոց ազգային համախորհրդակցության և Հայոց ազգային խորհրդի ու Անդրկովկասյան Սեյմի անդամ: 1918 թ. Վրաստանում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցիչ: 1920 թ. եղել է հաղորդակցության նախարար, օգոստոսի 10-ին Թիֆլիսում Ա. Բաբալյանի հետ միասին ստորագրել է հայ-ռուսական հաշտության համաձայնագիրը:

հայկական ուժերը հակահարված տվեցին ու դրանով նաև ապահովեցին Բաքվի Կոմունայի հաղթանակը:

Համագործակցության հաջորդ քայլը կարող էր տեղի ունենալ 1918 թ. մայիսին, երբ Բաքվի կարմիր բանակը նախապատրաստվում էր հարձակվել Գանձակի ուղղությամբ և ջախջախել մուսավաթական ուժերին: Բայց գործի ապահովության համար Վ. Լենինը Ստ. Շահումյանին խորհուրդ տվեց գործակցություն հաստատել վրաց մենշևիկների հետ: Այդ նպատակով իրականացված բանակցությունները դրական արդյունք չտվեցին, քանի որ վրացիները թուրքական վտանգից պաշտպանվելու հարցը լուծել էին Գերմանիայի օգնությամբ՝ ստանալով նրա հովանավորությունը և համապատասխան պայմանագիր ստորագրելով 1918 թ. մայիսի 28-ին Փոթիում: Իսկ արդեն 1918 թ. հունիսին մուսավաթական ուժերի դեմ Բաքվի խորհրդային իշխանության ձեռնարկած ուշացած հարձակումը, ի վերջո, հաջողություն չունեցավ, քանի որ շուտով վերջիններիս միացան դեպի Բաքու արշավող թուրքական զորքերը:

Այդ օրերին ՀՅ Դաշնակցության հանդեպ վստահությունը մեծացել էր ոչ միայն Բաքվի բոլշևիկների շրջանում, որոնք թուրք-թաթարական միացյալ արշավանքի դեմ Անդրկովկասում այլ շոշափելի աջակցություն չունեին, այլև Մոսկվայի բոլշևիկյան իշխանությունների մոտ:

Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության լիազոր ներկայացուցչության խորհրդական Միքայել Թումանյանի 2012 թ. տպագրված ուսումնասիրության մեջ առկա է հետևյալ ուշագրավ տեղեկատվությունը. «1918 թ. ամռան առաջին կեսին, Բաքվի համատեղ պաշտպանության ժամանակ, տեղական և կենտրոնական խորհրդային իշխանությունները պատճառներ չունեին անվստահությամբ վերաբերվելու հայկական ազգային կազմակերպությունների նկատմամբ և եղավ մի պահ, երբ Կոստանդնուպոլսում ՌԽՖՍՀ դեսպանի պաշտոնը մասնավոր կարգով առաջարկվեց Դաշնակցություն կուսակցության ձախ թևի առաջնորդ Ռոստոմին»[16]:

1918 թ. ամռանը՝ Բաքվի ուղղությամբ թուրքական բանակի լայնածավալ հարձակման պայմաններում, Բաքվի հերոսամարտը շարունակելու համար վճռորոշ նշանակություն էր ձեռք բերել զենք-զինամթերք հայթայթելու խնդիրը: Հենց այդ նպատակով էին Մոսկվայում գտնվում Հակոբ Զավրիևը, Լիպարիտ Նազարյանը, Արտաշես Չիլինգարյանը և Սիմոն Հակոբյանը: Գործը կազմակերպելու համար Մոսկվայի հայկական կոմիտեին կից ստեղծվում է առանձին մարմին, 7 հոգուց բաղկացած («ՀՅ Դաշնակցության դելեգացիա»)՝ հիշյալ 4 անձինք, ինչպես նաև Հայրիկ Եղիազարյանը, Հովսեփ Թադևոսյանը և 7-րդը, որի անունը չի հիշվում:

Այս պատվիրակությունը Հայկական գործերով կոմիսարիատի միջոցով բանակցություններ էր վարում Խորհրդային Ռուսաստանի կառավարական մարմինների հետ՝ ի վերջո խոստում ստանալով 16 հազար հրացանի համար: 1918 թ. հուլիսի վերջին օրերն էին, երբ դաշնակցականներ Հ. Զավրիևը, Լ. Նազարյանը և Ա. Չիլինգարյանը «Մետրոպոլ» հյուրանո-

16 **Туманян М**. Дипломатическая история Республики Армения в 1918–1920 гг., Ереван, 2012, с. 69. ՀՅԴ առաջնորդ Ռոստոմին բոլշևիկների կողմից վերագրված «ձախ թև» բնորոշման տակ պետք է հասկանալ Բաքվում Ս. Շահումյանի հետ վերջինիս ակտիվ համագործակցության բոլշևիկյան մեկնաբանությունը:

ցում պետք է հանդիպեին 3 բոլշևիկների՝ զենք-զինամթերքի ստացման հետագա գործընթացները ճշտելու համար:

Լ. Նազարյանը հետագայում գրած հուշագրական բնույթ ունեցող իր հոդվածում վկայում է, որ Գերմանիայից Մոսկվա վերադառնալուց հետո ինքը փորձել է Լ. Տրոցկու միջոցով պարզել խորհրդային իշխանություն-ների հետ «...յարաբերութիւններու կանոնաւորման անհրաժեշտութիւնը»[17]: Ի պատասխան Լ. Տրոցկու հեռախոսային հարցումի, Վ. Լենինը[18] իբրև թե ասել է. «Յայտնեցէք Լ-ին (Լիպարիտ Նազարյանին-Վ.Ղ.), որ մեր և Դաշ-նակցութեան տեսական տարբերութիւնները չեն կարող արգելք լինել եր-կու կուսակցութիւններու ընդհանուր աշխատանքին գործնական գետնի վրա: Համաձայն եմ ձեզ հետ, որ պէտք է խորհրդակցութիւն կազմել»[19]: Սակայն, երբ Լ. Նազարյանը վերադարձել է Լ. Տրոցկու մոտ, նրան են հանձնել վերջինիս հետևյալ պատասխանը. «Դժբախտաբար մենք ի վի-ճակի պիտի չլինենք իրագործելու պայմանաւորուած խորհրդակցութիւնը, վասնզի, համաձայն մեր ստացած տեղեկութիւններու, Դաշնակցութիւնը կը հետևի անգլիական օրիանտասիոնի, որով մեր ընդհանուր աշխատան-քը անհնարին կը դառնայ»[20]:

Բանն այն է, որ թուրք-գերմանական վտանգի ուժեղացման պայման-ներում Բաքվի պատգամավորների խորհրդում աջ ուժերի ճնշման տակ հուլիսի 25-ին որոշում էր ընդունվել օգնության համար Պարսկաստանից հրավիրել անգլիական զորքերին: Դա սկզբունքորեն անընդունելի էր Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունների համար, ուստի հուլիսի 31-ին Ստ. Շահումյանի ղեկավարած կառավարությունը վայր դրեց իշխանութ-յունը, որն անմիջապես անցավ խորհրդի էսեռ-մենշևիկյան մեծամասնու-թյանը, այսինքն՝ անգլիացիներին հրավիրելու կողմնակիցներին: Օգոս-տոսի 1-ին Բաքվում ստեղծվեց էսեռների ու մենշևիկների իշխանությունը՝ Կասպիական նավատորմի կենտրոնական կոմիտեի և բանվորների, զին-վորների, նավաստիների խորհրդի դիկտատուրան (Ցենտրոկասպիի դիկ-տատուրան), իսկ օգոստոսի 4-ին այստեղ ժամանեցին անգլիացիները:

Սակայն նման անհաջողությունը չկանգնեցրեց դաշնակցական գոր-ծիչներին, և նրանք խորհրդային ղեկավարներին մոտենալու նոր փորձ ձեռնարկեցին և այս անգամ դիմեցին հայ բոլշևիկ Սահակ Տեր-Գաբրիել-յանի[21] օգնությանը, որը, ինչպես վկայում է Լիպարիտ Նազարյանը, «... իր շատ մը կուսակիցներու պէս անտարբեր չէր հայութեան սպառնացող

17 Լ.Ն., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և խորհրդային իշխանութեան միջև համաձայ-նութեան փորձեր, «Դրօշակ»,1928, N 8-9, էջ 232-233:

18 **Լենին (Ուլյանով) Վլադիմիր Իլյիչ** (1870-1924) – ռուսական ու խորհրդային քաղաքական, պետական գործիչ, բոլշևիկյան կուսակցության հիմնադիր, 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման կազմակերպիչներից ու ղեկավարներից մեկը, Ռուսաստանի Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ, ԽՍՀՄ-ի հիմնադիր:

19 Լ.Ն., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և խորհրդային իշխանութեան միջև համաձայ-նութեան փորձեր, նույն տեղում, էջ 233:

20 Նույն տեղում:

21 **Տեր-Գաբրիելյան Սահակ Միրզայի** (1886-1937) – քաղաքական և պետական գործիչ, բոլ-շևիկյան կուսակցության անդամ: 1918 թ. եղել է Բաքվի Կոմունայի (խորհրդային իշխանության) նավթի բաշխման ու վաճառքի կոմիսար և արտակարգ հանձնաժողովի նախագահ: 1918-1919 թթ. կատարել է ՌԽՖՍՀ Ժողկոմխորհի հանձնարարությունները վառելանյութի մատակարարման ու բաշխման գծով:

վտանգին հանդէպ ու, միևնոյն ատեն, բաւական մօտ էր Լենինին, խնդրեցինք, որ ջանայ յաջողեցնել մեր այնքան փափագած խորհրդակցութիւնը»[22]: Փորձը կարծես թե հաջողվում էր. Վ. Լենինը համաձայնել էր երկու կուսակցությունների ներկայացուցիչներից ստեղծել հանձնախումբ՝ իր կողմից իբրև հանձնախմբի նախագահ առանձնացնելով Կամենևին (պետք է ենթադրել, որ սա զինվորական գործիչ Սերգեյ Կամենևն է)[23], Վ. Ավանեսովին[24] և Սահակ Տեր-Գաբրիելյանին: ՀՅ Դաշնակցության կողմից հանձնախումբը լրացրին Հ. Ջավրյանը, Ա. Չիլինգարյանը և Լ. Նազարյանը: Հանձնախմբի անդրանիկ նիստը կայանալու էր օգոստոսի 27-ին՝ Հայկական կոմիսարիատում, Վ. Ավանեսովի մոտ: Երբ դաշնակցականները ներկայացան, ապա, ինչպես գրել է Լ. Նազարյանը. «...երկար սպասեցինք, բայց բոլշևիկներէն ոչ ոք չեկաւ»[25], և նույն գիշերը տեղի ունեցավ Հ. Ջավրյանի և Լ. Նազարյանի ձերբակալությունը:

Մինչդեռ այդ օրերին թուրքական զորքերը շարունակում էին մարտերով մոտենալ Բաքվին, ուր նրանք ներխուժեցին սեպտեմբերի 15-ին: Ընկավ նաև Ցենտրոկասպիի իշխանությունը, իսկ անգլիական զորքերը նախապես հեռացան Բաքվից: Մինչ այդ՝ բանտից ազատ էին արձակվել Բաքվի 26 կոմիսարները, ովքեր փորձեցին հեռանալ դեպի Աստրախան, բայց ի վերջո հայտնվեցին Կրասնովոդսկում, որտեղ հաստատված Անդրկասպիայի էսեռական իշխանությունը, անգլիական զինվորական իշխանությունների հովանավորությամբ, 1918 թ. սեպտեմբերի 20-ին Կրասնովոդսկից ոչ հեռու գտնվող անապատի ավազուտներում գնդակահարեց Բաքվի 26 կոմիսարներին՝ Ստեփան Շահումյանին և նրա գործընկերներին:

Ուրեմն՝ Մոսկվայում ՀՅԴ-բոլշևիկներ համագործակցության նախնական ծրագիրն առաջ տարած Հ. Ջավրյանը և Լ. Նազարյանը ոչ մի կապ չունեին Բաքվում արձանագրված ողբերգական դրամայի հետ և անկեղծորեն ցանկանում էին շարունակել Ստ. Շահումյանի հետ ձեռք բերված համաձայնությունների կատարումը: Դրա փոխարեն նրանք հայտնվեցին բանտում, ուր մնացին 6 ամիս, մինչև 1919 թ. փետրվարի կեսերը, որից հետո ևս մեկ տարի արգելվում էր նրանց մեկնումը Մոսկվայից: Այդ ընթացքում՝ 1920 թ. փետրվարի 20-ին վախճանվեց բժիշկ Հ. Ջավրյանը:

Ստորև Հայաստանի Ազգային արխիվի 200-րդ ֆոնդից բերվող վավերագրերում առկա փաստական տվյալներն ու եզրակացությունները վկա-

---

22 Լ.Ն., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և խորհրդային իշխանութեան միջև համաձայնութեան փորձեր, նույն տեղում, էջ 233:

23 **Կամենև Սերգեյ Սերգեևիչ** (1881–1936) – խորհրդային զորահրամանատար, ռազմական տեսաբան: Ավարտել է Գլխավոր սպայակույտի ակադեմիան: Մասնակցել է Առաջին աշխարհամարտին որպես գնդապետ: 1918 թ. կամավոր մտել է կարմիր բանակ: 1918–1919 թթ. եղել է Արևելյան ռազմաճակատի հրամանատար, 1919–1924 թթ.՝ Ռուսաստանի (ԽՍՀՄ-ի) զինված ուժերի գլխավոր հրամանատար և Ռազմահեղափոխական խորհրդի անդամ:

24 **Ավանեսով Վառլամ Ալեքսանդրի** (Մարտիրոսով, Կարպիչ, իսկականը՝ Մարտիրոսյան Սուրեն Կարապետի, 1884–1930) – խորհրդային պետական-կուսակցական գործիչ, բոլշևիկյան կուսակցության անդամ: Սովորել է Ցյուրիխի (Շվեյցարիա) բժշկական համալսարանում: Եղել է Համառուսաստանյան Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության անդամ (նաև՝ քարտուղար): 1918 թ. նշանակվել է ազգությունների գործերի ժողկոմատին առընթեր Հայկական գործերի կոմիսար: Այդ պաշտոնում առնչվել է Հակոբ Ջավրյանի և Լիպարիտ Նազարյանի պատանդառման գործին:

25 Լ.Ն., Հայ Յեղափոխական Դաշնակցութեան և խորհրդային իշխանութեան միջև համաձայնութեան փորձեր, նույն տեղում, էջ 233:

յում են, որ ՀՅ Դաշնակցություն կուսակցությունը որևէ դերակատարություն չի ունեցել Ստեփան Շահումյանի և նրա գործընկերների դժբախտ ճակատագրում: Այլապես դաշնակցական պատանդները չէին կարող բանտից ազատ արձակվել:

Վլադիմիր Ն. Ղազախեցյան
Պատմ. գիտ. դոկտոր

DASHNAK HOSTAGES IN SOVIET MOSCOW

Notable documents concerning the arrest AR Federation activist Jacob Zavryan and Liparit Nazaryan

Vladimir N. Ghazakhetsyan

ДАШНАКСКИЕ ЗАЛОЖНИКИ В СОВЕТСКОЙ МОСКВЕ

Примечательные документы, касающиеся ареста деятелей АРФ Дашнакцутюн Акопа Завряна и Липарита Назаряна

Владимир Н. Казахецян

Փաստաթղթեր

N 1

Հայկական Հանրապետության
խաղաղության պատվիրակություն
Հեռագիր Բեռլին Նորին Գերազանցություն
Ռուսաստանի դեսպան Իոֆֆեին[26]
Պատճենը՝ դոկտոր Օհանջանյանին[27],
Ադլոն հյուրանոց
27 սեպտեմբերի 1918 թ.
Կ. Պոլիս
N 165

Հայկական Հանրապետության պատվիրակությունը խորին կսկիծով իմացավ, որ մեր ճանաչված քաղաքական մարդիկ՝ դոկտոր Զավրիևը և Լիպարիտ Նազարյանցը Մոսկվայում ձերբակալվել են կառավարության կողմից, որպես պատանդներ՝ Բաքվում Շահումյանի և նրա ընկերների ձերբակալման առիթով: Համոզված լինելով, որ այս ցավալի իրողությունը պարզապես որևէ թյուրիմացության հետևանք է, պատվիրակությունը թախանձագին խնդրում է, որ Դուք ի գործ դնեք Սովետների կենտրոնական կառավարությունում ունեցած Ձեր բարձր ազդեցությունը՝ վերոհիշյալ անձանց ազատությունը ձեռք բերելու համար, որոնց աշխատանքները ներկայումս հատկապես անհրաժեշտ են երիտասարդ հայկական հանրապետության համար: Հույս ունենալով, որ Սովետների կենտրոնական կառավարությունը բարենպաստ կերպով կընդունի մեր դիմումը՝ համարձակվում ենք Ձեզանից խնդրել՝ մեզ հաղորդելու հետևանքների մասին:

Հայկական պատվիրակության նախագահ՝

Ահարոնյան

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 80, թ. 77ա: Պատճեն: Մեքենագիր:
Նույնի ֆրանսերեն պատճենը՝ թ. 77:

N 2

Հայաստանի Հանրապետութիւն
ԱԳՄ
Դիվանագիտական միսիա
Վրաստանում
Թիֆլիս

Երևան Արտաքին Գործերի Պ. Մինիստրին
24 սեպտեմբերի 1918 թ.[28]
N 930

Երեկ ուշ երեկոյան ստացուեց հեռագիր հաւանօրէն Ուկրայնայի մեր կոմիսարիատից, որ բժ. Զաւրիևը և պ. Լիպարիտ Նազարեանը Մոսկվայում ձերբակալուել են իբրև պատանդներ և որ նրանց սպառնում է հրացանազարկութիւն, եթէ մենք արագօրէն միջոցներ ձեռք չառնէնք նրանց ազատելու:

---

26 **Իոֆֆե Ադոլֆ Աբրամովիչ** (1883–1927) – հեղափոխական շարժումների մասնակից, խորհրդային դիվանագետ ու կուսակցական գործիչ: Տրոցկուց հետո ղեկավարել է Ռուսաստանի պատվիրակությունը Գերմանիայի հետ Բրեստ–Լիտովսկում վարվող բանակցություններում: 1918 թ. Հայկական հարցի կապակցությամբ առնչություններ է ունեցել հայ գործիչների հետ Գերմանիայում, որտեղ գործում էր որպես Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ:

27 **Օհանջանյան Համազասպ Հովհաննեսի** (Մեերյան, Համո, 1873–1947) – հայ պետական–քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ, բժիշկ: 1917 թ. ընտրվել է Ռուսաստանի Սահմանադիր ժողովի պատգամավոր, 1917 թ.՝ Հայոց ազգային համախորհրդակցության մասնակից, 1918 թ.՝ Անդրկովկասյան սեյմի անդամ և նրա կառավարության նախարար: 1920 թ. մայիս–նոյեմբեր ամիսներին ղեկավարել է Բյուրո–կառավարությունը և արտաքին գործերի նախարարությունը:

28 Հնարավոր է, որ սեպտեմբերի 24–ի այս հեռագրին հաջորդած լինի հանրապետության արտգործնախարարի հետևյալ հեռագիրը (ժամանակը ցույց չի տրված) երկու հասցեով՝ Թիֆլիս, Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչություն, մյուսը՝ Մոսկվա, Հայկական գործերի կոմիսար Ավանեսովին և պատճենը՝ արտգործժողկոմ Չիչերինին: Նշվում է, որ պատանդ վերցված Զավրիևը և Նազարյանը որևէ առնչություն ու շփում չեն ունեցել և չէին էլ կարող ունենալ Շահումյանի, Զափարիձեի, Պետրովի ու մյուսների ձերբակալության հետ, որ դա իրականացրել է Ցենտրոկասպիի դիկտատուրան և գործադիր կոմիտեի ժամանակավոր նախագահությունը, և որ Հայաստանի արտգործնախարարությունը որևէ հնարավորություն չունի պատանդների փոխանակման համար, խստորեն պահանջելով ազատել Զավրիևին ու Նազարյանին: (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 141, թ. 14 և ֆ. 275, ց. 5, գ. 10, թ. 130):

Այսօր առաւօտ եղայ Ֆոն-Կրեսսի [29] մօտ և խնդրեցի.

ա.-իր կողմից դիմել Մոսկվայի գերմանական դեսպանին, որ միջնորդի Ռուս կառավարութեան առաջ ազատել տալու ձերբակալւածներին.

բ.-ուղարկի իմ հեռագրները այս խնդրով Բեռլին բժ. Օհանջանեանին և Մոսկվայ՝ Վահան Տերեանին և Կարախանին:

Առաջին հեռագրով ես խնդրում եմ գերմանական կառավարութեան և Իոֆֆէի միջամտութիւնը, իսկ երկրորդ հեռագրով նախազգուշացնում, որ մենք ռէպրեսսիւ միջոցներ ձեռք կառնենք, եթէ ձերբակալւածներին բաց չթողնեն: Երկրորդ հեռագիրը մասնաւոր բնոյթ է կրում:

Բացի սրանից ինձ կարևոր է թւում, որ թե վերոյիշեալ ձերբակալւածներին ազատել տալու և թէ մանաւանդ նման դեպքերի կրկնութիւնը առաջիկայում վերացնելու համար խօսւի տեղոյդ մեծամասնականների հետ, որ նրանք դիմեն Մոսկվայի իրենց ընկերներին և չափաւորին նրանց եռանդը:

Սրա հետ միասին Ձեզ ուղարկում եմ այս խնդրով իմ ստացած և ղրկած հեռագրների պատճէնները:

Խորին հարգանօք

Ջամալեան

Նշումներ. 1. Вх. 398, 18.X. [1] 918

2. Թարգմանել.

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 141, թ. 5 և հակ.: Բնագիր: Ձեռագիր:

N 3

Մոսկվա, Ժողկոմխորհ, Հայկական գործերի
գծով կոմիսար Ավանեսովին[30] Պատճենը. Լենինին,
Տրոցկուն, Մակինցյանին[31], Տերյանին
7 նոյեմբերի 1918 թ.
Երևան

Հենց հիմա ծանոթանալով Ձեր նոյեմբերի 19-ի հեռագրի բովանդակությանը, շտապում ենք հաղորդել Ձեզ մեր ընկերական կարծիքը տվյալ հարցի վերաբերյալ: Բժիշկ Զավրիևի և Լիպարիտ Նազարյանի ձերբակալությունը, որպես պատանդների, որ եկել են որպես պատվիրակներ, հատուկ առաքելությամբ, անարդարացի քայլ է: Դաշնակցություն կուսակցության անդամների վերաբերմունքը անձամբ Շահումյանի նկատմամբ թշնամական չի եղել, նրա նկատմամբ հարգանք են տածել: Մինչ Բաքվի իրադարձությունները դաշնակցականները երկու անգամ Շահումյանին օգնել են ծանր հանգամանքներում[32]: Դժվար է ընդունել, թե իբր նրանք կարող են մեղավոր լինել Շահումյանի և նրա ընկերների ճակատագրում նրանց բանտարկությունից հետո:

Ստեղծված պայմաններում կուսակցությունը ի վիճակի չէ իրական քայլեր ձեռնարկել ընկերների գտնվելու վայրը պարզելու և նրանց վիճակը թեթևացնելու համար:

Ընկերների ճակատագրի մասին շրջանառվում են ամենատարբեր լուրեր, որպիսիք ստուգելու որևէ հնարավորություն չկա:

Թախանձագին խնդրում ենք ազատ արձակել Զավրիևին և Նազարյանին:

Արշավիր Մելիքյան[33]

---

29 **Կրեսս ֆոն Կրեսենշտեյն, Ֆրիդրիխ** (1870-1948) – գերմանական զինվորական գործիչ, գեներալ: Առաջին աշխարհամարտի տարիներին ծառայել է Թուրքիայում որպես Ջեմալ փաշայի բանակի շտաբի պետ: 1918 թ. Կովկասում գերմանական ռազմական ներկայացուցիչ:

30 Բնագրում սխալ է՝ Օվանեսով:

31 **Մակինցյան Պողոս Մկրտչի** (1884-1938) – խորհրդային պետական, կուսակցական գործիչ, գրաքննադատ, հրապարակախոս, բոլշևիկյան կուսակցության անդամ: 1918 թ. եղել է Երևանի ազգային խորհրդի կազմում, նույն թվականին մեկնել է Մոսկվա, աշխատել ազգությունների գործերի ժողկոմատում՝ հայկական գործերի գծով, 1919-1920 թթ.՝ լուսավորության ժողկոմատի ազգային փոքրամասնությունների բաժնի վարիչ, 1920-1921 թթ.՝ Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովում՝ ազգային փոքրամասնությունների մամուլի բյուրոյի վարիչ:

32 Տե՛ս **Ռուբէն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. է, Թեհրան, 1982, էջ 141:

33 **Մելիքյան Արշավիր Միքայելի** (1879-1937) – հեղափոխական, հրապարակախոս, 1906 թվականից՝ բոլշևիկ: 1918-1919 թթ. վերահրատարակել է «Խոսք» թերթը՝ որպես բոլշևիկների կուսակցության Երևանի կազմակերպության օրգան: Եղել է Հայաստանի Հանրապետության առաջին խորհրդարանի (Հայաստանի խորհրդի) անդամ: Սոցիալ-դեմոկրատական խմբակցությունում մենշևիկների հետ ունեցած տարաձայնությունների պատճառով հրաժարվել է պատգամավորական մանդատից: Մասնակցել է Հայաստանի բոլշևիկյան կազմակերպության 1919 թ. սեպտեմբերի և 1920 թ. հունվարի

7.XI.1918 թ.
ք. Երևան

Նշում. նամակի 1-ին էջի վերին ձախ կողմում հայերեն գրված է՝
Ստացված է 21.XII:
ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 141, թ. 20 և հակ.: Բնագիր: Ձեռագիր:
Թարգմանություն ռուսերենից:

N 4

Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության
լիազոր ներկայացուցիչ Ա. Ջամալյանի հեռագիրը Երևան Արտաքին գործերի նախարարին, Հակոբ Ջավրյանի հեռագրով և Վ. Ավանեսովի ծանոթագրություններով
1 դեկտեմբերի [1918 թ.]
N 2096

Այսօր վրացական [հեռագրական] գործակալությունը Մոսկվայից՝ Համառուսաստանյան Կենտգործկոմից ստացել է հետևյալ հեռագիրը. «Թիֆլիս, Երևան, Թեհրան, Էնզելի, Կրասնովոդսկ, դաշնակցության բյուրոյին, կուսակցության կենտրոնական կոմիտեին, Հայկական կորպուսի հրամանատարությանը[34]. Նազարյանը և ես ձերբակալված ենք Մոսկվայում մեծամասնականների կառավարության կողմից, որպես պատանդներ Շահումյանի և նրա որդիների համար: Մենք գտնվում ենք ուժեղ բանտային ռեժիմի պայմաններում, կիսաքաղց օրաբաժնով, տանջվում ենք ֆիզիկապես ու հոգեպես: Կառավարությունը մեր ճակատագիրը կապել է Շահումյանի ճակատագրի հետ և հայտարարում է, թե դաշնակցականները նրան հանձնել են թշնամուն, և որ նրա ճակատագիրը լրիվ կախված է կուսակցությունից, և որ վերջինը կարող է հասնել նրա ազատման, քանի որ <աղավաղում> զիջել կուսակցության խստիվ պահանջին: Նկատի ունենալով <աղավաղում> մենք շատ շնորհակալ կլինենք, եթե դուք կարողանայիք հնարավորություն գտնել Շահումյանի ազատության գնով ազատել մեզ: Վերջին հաշվով խնդրում եմ հեռագրել ինձ, Ժողկոմխորհի միջոցով, երբ և ինչպիսի պայմաններով կարող է տեղի ունենալ Շահումյանի, նրա որդիների փոխանակումը մեզ հետ: Փոխանակման ազատության մանրամասնությունները խնդրում եմ նախապես համաձայնեցնել ինձ հետ: Մեր բախտը ձեր ձեռքերում է, բայց դրանով մենք չենք ցանկանում սահմանափակել ձեր գործողությունների ազատությունը և պատրաստ ենք ամեն զոհողությունների: Ձեր պատասխանը մենք պետք է ստանանք առաջիկա օրերի ընթացքում: Հասցեագրեք. Մոսկվա Համառուսաստանյան Կենտրոնական [Գործադիր] Կոմիտե, կիրակի 17 նոյեմբերի 1918 թ.[»]: Ջավրիևի ռադիոհեռագրին կից ծանոթագրությունը. 1. Նախ և առաջ Ջավրիևը և Նազարյանը պատանդ են վերցվել ոչ միայն Շահումյանի, նրա երեխաների, այլ նաև Ջափարիձեի[35], Պետրովի[36] և Բաքվում բանտարկված մյուս ընկերների համար, 2. Կիսաքաղց օրապահիկի խիստ ռեժիմի մասին դժգոհությունը իրականությանը չի համապատասխանում, քանի որ իմ անձնական կարգադրությամբ նրան թույլատրված է ամեն տեսակ մթերքների ազատ հանձնում և անձնական տեսակցություն, 3. Ջավրիևի ճակատագիրը կապված է ոչ միայն Շահումյանի, այլև մյուս բոլոր պատանդների ճակատագրերի հետ, ուստի գնդակահարության մասին լուրերը[37] չեն խանգարում մյուս պատանդնե-

---

գաղտնի խորհրդակցություններին, ընտրվել Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) կազմում: Այնուհետև աշխատել է Մոսկվայում, իսկ 1921 թ.՝ Թիֆլիսում:

34 Մոսկվայի բանտում գտնվող և Հայաստանից կտրված Հակոբ Ջավրյանը չէր կարող իմանալ, որ Առանձին հայկական կորպուսն այլևս գոյություն չուներ: Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի հայ-թուրքական պայմանագրի համաձայն՝ կորպուսը կազմացրվել էր, և նրա փոխարեն ստեղծվել էր մեկ դիվիզիա: Այն սկզբում բաղկացած էր երկու բրիգադից, որոնցից յուրաքանչյուրն ուներ երեք գունդ: Դիվիզիայի հրամանատար նշանակվեց գեներալ-մայոր Մովսես Սիլիկյանը, ով կորպուսում վարել էր 2-րդ դիվիզիայի հրամանատարությունը:

35 **Ջափարիձե Պրոկոֆի Ապրասիոնի** (1880-1918) – Ռուսաստանում և Այսրկովկասում հեղափոխական շարժման գործիչ, բոլշևիկյան կուսակցության անդամ: Սովորել է Թիֆլիսի ուսուցչական ինստիտուտում: 1917 թ. ընտրվել է կուսակցության Բաքվի կոմիտեի անդամ, մասնակցել կուսակցության 6-րդ համագումարին և ընտրվել նրա կենտկոմի անդամության թեկնածու: 1918 թ. սկզբին Բաքվի խորհրդի գործադիր կոմիտեի նախագահն էր, ապրիլից՝ Բաքվի Ժողկոմխորհի ներքին գործերի, այնուհետև՝ պարենավորման ժողովրդական կոմիսարը: Նա մեկն էր Բաքվի 26 կոմիսարներից:

36 **Պետրով Գրիգորի Կոնստանտինովիչ** (1892-1918)- 1918 թ. օգոստոսին Ռուսաստանից Բաքու ժամանած կարմիրբանակայինների ջոկատի հրամանատար, ձախ էսեռ, 26 կոմիսարներից մեկը, ով ևս գնդակահարվել է 1918 թ. սեպտեմբերի 20-ին:

37 Խոսքը վերաբերում է Բաքվի 26 կոմիսարներին գնդակահարելու մասին տարածված լուրերին:

րի փոխանակման շուրջ բանակցությունների և դաշնակցության կենտրոնական կոմիտե հեռագիր ուղարկելու առաջարկության հնարավորությանը:

Ես դարձյալ դիմում եմ առաջարկությամբ՝ այս առիթով սկսել բանակցություններ: Հակառակ դեպքում հայ բանվոր դասակարգի և ամբողջ ինտերնացիոնալի[38] առաջ ամբողջ պատասխանատվությունը լրիվ դնում եմ դաշնակցության ներկայացուցչի վրա: Պատասխանի համար տալիս ենք ոչ ավել 14 օր: Հայկական գործերի գծով կոմիսար Ավանեսով»: Հեռագիրը տրված է Ժողկոմխորհի առաջարկությամբ: Սպասում եմ հրահանգների: 2096 **Ջամալյան**

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 141, թ. 12 և հակ.: Մեքենագիր:
Թարգմանություն ռուսերենից:

N 5

ՀՀ Մինիստրների խորհրդի որոշումը
Բաքվի 26 կոմիսարների ձերբակալության հետ
Հայաստանի կառավարության առնչություն չունենալու մասին
3 դեկտեմբերի 1918 թ.

Լսեցին.– Արտաքին գործերի մինիստրի զեկուցումը Մոսկվայում մեծամասնականների կողմից Թիֆլիսի Ազգային խորհրդի ներկայացուցիչների՝ բժիշկ[39] Ջավրիյանի և Լ. Նազարյանի ձերբակալման և նրանց բանտից արձակելու առթիվ մեծամասնականների դրած պայմանների մասին:

Որոշեցին.– Առաջարկել Արտաքին գործերի մինիստրին.

ա) Բողոք հայտնել Ռուսաստանի խորհուրդների կառավարությանը այդ ձերբակալման դեմ:

բ) Հայտնել, որ Հայաստանի կառավարությունը ոչ մի մասնակցություն և տեղեկություն չունի Շահումյանի և նրա ընկերների ձերբակալման մասին:

գ) Պահանջել անմիջապես արձակել ձերբակալվածներին:

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 105, թ. 78: Վավերացված պատճեն: Մեքենագիր:

N 6

Վրաստանում Հայաստանի դիվանագիտական
առաքելության հեռախոսագիրը Վրաստանի
Հանրապետության արտաքին գործերի մինիստրություն
24 փետրվարի 1919 թ.[40*]

1918 թ. Մոսկվայում Խորհրդային կառավարությունը ձերբակալել էր հայ հասարակական գործիչներ բժիշկ Հակոբ Ջավրիևին և գրականագետ Լիպարիտ Նազարյանին. բանտում պահելով մի քանի ամիս, Խորհրդային կառավարությունը նրանց ազատ է արձակել, ընդ որում պարտավորեցնելով մշտապես ներկայանալ կոմիսարիատ և սպառնում է նորից բանտարկել, եթե չներկայացվի հավաստագիր այն մասին, որ բոլշևիկներ Ջափարիձեի ու Շահումյանի ընտանիքները գտնվում են ազատության մեջ և նրանց տեղաշարժը սահմանափակված չէ:

Բժիշկ Ջավրիևի հարազատները և հայ գրողների ընկերությունը դիմել են ինձ խնդրանքով, հավաստել՝ արդյոք Ջափարիձեի և Շահումյանի ընտանիքները ազատության մեջ են:

Այս խնդրանքները կատարելու պատճառով խոնարհաբար խնդրում եմ Ձեզ չմերժել՝ թույլատրելու Շահումյանի որդուն ռադիոյով խոսել Մոսկվայում բնակվող իր մոր հետ, զուտ սկզբունքային առումով, որպեսզի խորհրդային իշխանությունները կարողանան համոզվել, որ Շահումյանի որդին Թիֆլիսում ազատության մեջ է:

Դիվանագիտական ներկայացուցիչ
ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 120, թ. 123: Պատճեն: Մեքենագիր: Թարգմ. ռուս.

38 Հասկանալ՝ **2-րդ սոցիալիստական ինտերնացիոնալը**, որի անդամ էր ՀՅԴ-ն 1907 թվականից:
39 Բնագրում սխալ է՝ բժիշկներ:
40* Փաստաթղթի վրա արված մակագրության ժամանակը խիստ անընթեռնելի է:

N 7
Ռադիոգիր Մոսկվայից Թիֆլիս, Հայ գրողների
ընկերության նախագահ Հովհաննես Թումանյանին
28 մարտի [1919 թ.]
N 1212

Ավելի քան վեց շաբաթ առաջ Նազարյանը և Ջավրիևը ազատվել են և գտնվում են ազատության մեջ: Շտապ միջոցներ ձեռնարկեք պատանդներին փոխանակելու համար. նշեք փոխանակման տեղը և ժամանակը:

ՀԿԳԿ-ի[41*] քարտուղար **Ավանեսով**
Նշում. Երևան 9. IV. 19[42**]
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 141, թ. 23: Պատճեն:
Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

N 8
Ռադիոհեռագիր Դանիական [Կարմիր] խաչի առաքելությանը
Մոսկվա, Ժողովրդական կոմիսարների խորհրդին
Պատճենը. Հայկական գործերի գծով կոմիսար Ավանեսովին
6 մայիսի 1919 թ.

Ջափարիձեի կինը և Շահումյանի որդիները ազատ են արձակվել առանց որևէ երաշխավորության և ազատ մեկնելու որևէ սահմանափակման: Այդ մասին Ջափարիձեն ինքն է հաղորդել Ստալինին[43] Մոսկվա հատուկ սուրհանդակի միջոցով: Ուստի փոխանակության նոր միջոցառումները դառնում են անհարկավոր և մենք խնդրում ենք Ջավրիևին ու Նազարյանին ընձեռել մեկնելու լրիվ ազատություն: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար **Տիգրանյան**[44] N 1358:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 141, թ. 30: Պատճեն: Մեքենագիր:
Թարգմանություն ռուսերենից

N 9
Սիրելի Միքայել [45]
22 մայիսի 1919 թ.
Մոսկվա

Քեզ անշուշտ յայտնի է մեր ներկայ կացութիւնը, ինչպէս նաև այն ամէնը, ինչ որ մեզ վիճակուած էր ապրել վերջին տարւա ընթացքում:

Այդ մասին Կովկաս և քեզ մի քանի անգամ լուր ենք տուել՝ հեռագրով, նամակով և մինչև իսկ յատուկ մարդով:

Բայց միակ արդիւնքը մինչև օրս եղել է Նուբար փաշայի [46] կողմից ապրիլ 30-ին Ջաւ-

---

41* ՀԿԳԿ՝ Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտե:

42** Հասկանալ՝ ՀՀ արտգործնախարարությունում փաստաթուղթը մուտքագրելու ժամանակը:

43 **Ստալին (Ջուղաշվիլի) Իոսիֆ Վիսարիոնովիչ** (1879–1953) – խորհրդային պետության և բոլշևիկների կուսակցության ղեկավար գործիչ, 1922 թվականից կուսակցության կենտկոմի գլխավոր քարտուղար: 1917–1922 թթ. եղել է Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար, որի կազմում գործել է Հայկական գործերի կոմիսարիատը: 1917 թ. դեկտեմբերի 29-ին Վ. Լենինի հետ միասին ստորագրել է «Թուրքահայաստանի մասին» հռչակագիրը, որից հետագայում Ռուսաստանը փաստորեն հրաժարվեց: Ի. Ստալինը 1920 թ. տեղի ունեցած Հայաստանի խորհրդայնացումը համարում էր Հայկական հարցի լուծում:

44 **Տիգրանյան Սիրական Թադևոսի** (1875–1947) – հասարակական-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ, իրավաբան, ավարտել է Պետերբուրգի համալսարանը: Ռուսաստանի 2-րդ պետական դումայի անդամ, կովկասյան ուսումնական շրջանի կոմիսար: Մասնակցել է 1917 թ. Հայոց ազգային համախորհրդակցությանը, եղել է Հայաստանի Հանրապետության 1-ին և 2-րդ խորհրդարանների անդամ, նաև արտաքին գործերի, ապա լուսավորության նախարար, Երևանի համալսարանի պրոֆեսոր:

45 **Միքայել**– հավանաբար խոսքը Միքայել Վարդանյանի մասին է:

46 **Պողոս Նուբար փաշա, Նուբարյան** (1851–1930). հայ հասարակական-քաղաքական գործիչ, բարձրագույն կրթություն ստացել է Փարիզում: Եգիպտոսում գրաղեցրել է մի շարք ղեկավար պաշտոններ: 1906 թ. հիմնադրել է Հայկական համընդհանուր բարեգործական ընկերությունը: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Գևորգ 5-րդ կաթողիկոսը նրան նշանակել է հայ ազգային պատվիրակության ղեկավար՝ խնդիր դնելով եվրոպական երկրների առաջ նորից բարձրացնել Թուրքիայում հայկական բարենորոգումների անցկացման հարցը: Այդ ուղղությամբ հայկական պատ-

րիւևին տրուած հեռագիրը՝ իր քայլերի մասին:

Օգտւում եմ առիթից ամփոփ կերպով ներկայացնելու քեզ մեր գործի դրութիւնը: Բանտից, ուր մնացինք ճիշտ վեց ամիս, մեզ ազատեցին երեք շաբաթով միայն, պայմանով, որ ջանանք յաջողացնել փոխանակումը Շահումեանի երկու որդիների և Ջապարիձէի կնօջ, որոնք գտնւում էին Բագու անգլիացիների ձեռքը: Ի՞նչ կարող էինք անել, եթե ոչ դիմել Կովկաս մեր ընկերներին և քեզ: Երեք շաբաթ լրացաւ, բայց մենք ոչ մէկ հետևանքի չհասանք: Մեր բանտ վերադառնալու պայմանաժամը երկարաձգեցին դարձեալ երկու շաբաթով և այնուհետև շարունակ երկարաձգում են 15–20 օրով: Վերջը մեզ հայտնեցին, թե Շահումեան եղբայրները և տիկին Ջապարիձէն երաշխաւորութեամբ ազատ են արձակուած, և թէ սովետական իշխանութիւնը բանակցում է անգլիացիների հետ փոխանակելու համար նրանց մօտ գտնուող մեծամասնականներին Ռուսիայում ձերբակալւած անգլիացիների հետ, որոնց ցանկի մէջ, իբր թէ, մտած էինք նաև մենք երկուքս: Սակայն մի քանի օր առաջ պարզւեց, որ անգլիացիների առաջին խումբը (զինւորական միսսիօնը) արդէն փոխանակւած է (Ռասկօլնիկօվի[47] և միւսների հետ) և այսօր վաղը պիտի մեկնի: Երկրորդ խումբը պիտի փոխանակւի երևի մօտաւորապէս երեք շաբաթից հետո, այն մեծամասնականների հետ, որոնց թվումն են Շահումեանները և Ջապարիձէն: Մեր անունները ոչ մեկ ցանկի մէջ չկան, և, ինչպէս իմացանք, անգլիացիները բնաւ հոգ չեն տանում մեր մասին: Այսպէսով նրանք բոլորը պիտի ազատւեն երթան, իսկ մենք պիտի մնանք նոյն տարտամ կացութեան մէջ:

Խնդրում ենք այդտեղ կազմւած հայ կառավարութեան միջոցով կամ այն ճամբաներով, որ դու հնարաւոր ու յարմար կը նկատես, դիմեք անգլիական կառավարութեանը և, բացատրելով մեր վիճակը, պնդեք, որ մեզ մտցնեն գոնէ երկրորդ ցանկի մէջ կամ, որ, աւելի փափագելի է, առանց կապելու մեզ անգլիացի պատանդների հետ՝ մասնակի կերպով փոխանակեն մեզ Շահումեանների և տիկին Ջապարիձէի հետ:

Այդ է պահանջում տարրական արդարութիւնը: Իրապէս, ոչ մեր կուսակցութիւնը, ոչ էլ կառավարութիւնը մաս են ունեցել յիշեալների ձերբակալման մէջ: Նրանց պահողները անգլիացիներն են, ու, չնայելով, որ մենք իզուր տուժում ենք, անգլիացիները մեզ բացարձակապէս անտես են անում:

Եթէ այսպէս թե այնպէս փոխանակութիւնը գլուխ գա, ջանալու է, որ մեզ փոխանակէին այնպիսի մի կէտում, որտեղից կարող լինէինք Եւրոպա անցնել, որովհետև Ռուսիոյ ճանապարհներով հնարաւորութիւն չկայ Կովկաս գնալու:

Նադյան և իր ամուսինը (Արտաշէս Չիլինգարեան), որոնք նոյնպէս Մոսկվա են, բարևում են քեզ և խնդրում են յայտնել հետևեալը. թէև իրենք պատանդներ չեն, բայց որովհետև այստեղից հեռանալու և Կովկաս հասնելու միջոց չկա, անհրաժեշտ է, որ մեզ հետ միասին փոխանակւողների նոյն ցանկին մէջ մտցւեին:

Տարակոյս չունեմ, սիրելի Միքայել, որ ջանք չես խնայի կատարելու խնդիրներս: Հարկաւ, այն խոշոր հարցերի համեմատութեամբ, որոնցով այժմ զբաղւած եք, մերը կարող է շատ անկարևոր երևալ, բայց մենք էլ շատ տանջւեցինք և նկատի ունեցիր, որ այժմ էլ մեր կեանքի պայմանները շատ ծանր են ու մօտ ապագային կարող են ուղղակի անհանդուրժելի դառնալ:

Հեռագիրներ ու նամակներ մեզ համար ղրկելու է տեղիս տանիական միսսիօնի միջոցով:

Ջերմ բարևներով և համբոյրներով **Լիպարիտ**[48]

վիրակության գործունեությունը շարունակվեց երկար տարիներ: 1919 թ. փետրվարին Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավ. Ահարոնյանի հետ միասին Փարիզի խաղաղության համաժողովին ներկայացրել են հայկական պահանջները՝ անկախ և միացյալ Հայաստանի ստեղծման խնդիրը: 1919 և 1920 թվականներին Պողոս Նուբար փաշայի նախաձեռնությամբ տեղի է ունեցել երկու «Հայ ազգային համագումար», որոնցից առաջինը քննարկել է նշված պահանջները: Մեծ ծավալի բարեգործական գործունեություն է ծավալել նաև Խորհրդային Հայաստանում (հիմնադրել է Նուբարաշեն ավանը, կառուցել աչքի կլինիկան Երևանում):

47 **Ռասկոլնիկով Ֆեոդոր Ֆեոդորովիչ** (1892–1939) – խորհրդային զինվորական և պետական գործիչ, դիվանագետ: 1918 թ. դեկտեմբերի 26–ին գերվել է անգլիական նավաստիների կողմից Տալլինի (Էստոնիա) վրա խորհրդային ականաորս նավերի արշավի ժամանակ: Գտնվել է Լոնդոնի բանտերից մեկում: Գերությունից ազատվել է Ռուսաստանում բանտարկված բրիտանական քաղաքացիների խմբի հետ փոխանակվելու միջոցով: 1934–1938 թթ. ԽՍՀՄ լիազոր ներկայացուցիչն էր Բուլղարիայում: Ստալինյան բռնաճնշումների շրջանում կանխելով իր անխուսափելի ձերբակալությունը՝ չվերադարձավ հայրենիք:

48 **Լիպարիտ Նազարյանը և մյուս ընկերները** նույն ժամանակաշրջանում համանման խնդրանքով դիմած են եղել նաև ՀՅԴ Արևելյան բյուրոյին: Վերջինիս 1919 թ. հունիսի 16–ի նիստի արձանագրության մեջ գրառվել է նաև հետևյալը. «**Ստացած գրութիւններ**. Մոսկվայից մեր ընկերներ բժ. Զաւրիևը, Արտաշէս Չիլինգարեանը և Լիպարիտը [Նազարյան] մի առանձին գրութեամբ դարձեալ խնդրում են, որ կուսակցությունը միջոցներ ձեռք առնի իրենց ազատելու և երկիր բերել տալու համար: Բացի այդ, խնդրում են, որ Աստրախան, Ցարիցին և այլ վայրերում

Նշում. Նամակի 1-ին էջի ձախ վերին կողմում գրված է Nazarian, իսկ աջ վերին կողմում՝ պատճեն, ստացած հուլիս 1-ին:
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355 (մաս 1), թ. 223 և հակ. – 224 և հակ.:
Պատճեն: Ձեռագիր:

N 10

Պարոն Վանսիտար[49], բրիտանական պատվիրակ Փարիզում
4 հուլիսի 1919 թ.
Փարիզ

Ես ինձ թույլ եմ տալիս Ձեր բարյացակամ ուշադրությունը հրավիրել մեր երկու հայրենակիցների՝ պր. Լիպարիտ Նազարյանի և բժիշկ Ջավրիևի շատ լուրջ և վտանգավոր դրության վրա, որոնք ներկայումս գտնվում են Մոսկվայում:

Այն մոմենտում, երբ անգլիական զորքերն առաջին անգամ գրավեցին Բաքուն, բոլշևիկ առաջնորդներ Շահումյանն ու Ջափարիձեն ձերբակալվեցին և ապա դեպքերի ընթացքում, հայտնի չէ, թե ուր, նրանք կոտորվեցին:

Մոսկվայի համայնավար կառավարությունը այդ դեպքերի պատասխանատվությունը հայերի ու անգլիացիների վրա բարդելով՝ ձերբակալեց Մոսկվայում գտնվող պր. Լիպարիտ Նազարյանին և բժիշկ Ջավրիևին և մինչև այժմ պահվում են որպես պատանդ, հակառակ նրան, որ բոլորովին կապ չունեն Բաքվի դեպքերի հետ:

Այս իրողությունը Ձեզ հաղորդելով, հույս եմ հայտնում, որ դուք կբարեհաճեք մեզ օգնել՝ այս երկու հարգանքի արժանի անձնավորությունների ազատությունը ապահովելու համար:

Նորին վեհափառության բրիտանական կառավարությունը, ընդունելով մեր խնդիրքը, վերոհիշյալ մեր հայրենակիցներին պաշտպանելու և նրանց օգնելու՝ Ռուսաստանից դուրս գալու համար, այնպիսի մի ակտ գործած[50] կլինի, որի համար մեր երախտագիտությունը ապահոված կլինի Անգլիայի հանդեպ:

Ընդունեցեք...[51]
Ահարոնյան
ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355 (մաս 1), թ. 225-226: Պատճեն:
Մեքենագիր: Ֆրանսերեն բնագիրը տես նույն տեղում, թ. 230:

N 11

Բրիտանական
պատվիրակություն

Պր. Ահարոնյանին
Վոցմոնտ հյուրանոց
Փարիզ
17 հուլիսի 1919 թ.

Պարոն,

Համաձայն պարոն քարտուղար Բալֆուրի[52] հրահանգների, ես հիշեցնում եմ Ձեր հուլիսի 4-ին գրած նամակը Ձեր հայրենակից պր. Լիպարիտ Նազարյանի ու բժիշկ Ջավրիևի վերաբերյալ, որոնք գտնվում են Մոսկվայում:

գտնուած մեր 30.000 հայ գաղթականութեան մասին մտածեն և ազատեն անտանելի դրութիւնից: Բոլշևիկ կառավարութիւնը համաձայն է մերոնց թոյլ տալ, որ Աստրախանի վրայով անցնեն Բագու: Բիւրօն որոշեց նախկին ճանապարհով պահանջել Լենինից մեր ընկերներին ազատել, թոյլ տալ, որ դուրս գան բոլշևիկեան շրջանից»: Տես Ավագ Ա. Հարությունյան, ՀՅ Դաշնակցության 1918-1920 թթ. պատմության վավերագրերը..., «ՎԷմ», 2012, N 4 (40), էջ 184:

49 **Վանսիտար Ռոբերտ Գիլբերտ** (1881-1957) – անգլիացի դիվանագետ, Մեծ Բրիտանիայի արտգործնախարարի տեղակալ:

50 Բնագրում սխալ է՝ գործում:

51 Բնագրից չի թարգմանված հետևյալ քաղաքավարական արտահայտությունը. Veuillez agre e'r, Monsieur, l'assurance de ma conside'ration la plus parfaite.

52 **Բալֆուր Արտուր Ջեյմս** (1848-1930) – անգլիացի պետական գործիչ, դիվանագետ, 1916-1919 թթ. արտաքին գործերի մինիստր:

Ֆորեյն օֆիսը Լոնդոնում զբաղվել է այդ գործով, բայց ափսոսանք է հայտնում Ձեզ տեղեկացնելու, որ հնարավոր չէ նրանց արձանագրել այն ցուցակում, որ պետք է փոխանակել համայնավարների հետ: Շատ ամիսներ ի վեր, կայացած բանակցություններից հետո, անգլիական պատերազմական գերիները և անգլիական քաղաքացիները փոխանակելու համար՝ հաջողվեց միայն մասամբ և մինչև որ բոլոր անգլիական հպատակները չազատվեն, Ֆորեյն օֆիսը կարծում է, որ պարտական չէ զբաղվել այն հայերի հարցով, որոնք սովետների կառավարությանն են հարել:

Այնուհանդերձ պր. Ջավրինի և Նազարյանի անունները նկատի են առնված և ջանքեր կգործադրվեն, որպեսզի նրանց ազատագրումը հեշտացվի, երբ հնարավորություն ստեղծվի նրանց փոխանակման կարգով օգնելու:

Ձեր խոնարհ ծառա **Էյրե Ա. Գրով**[53]

ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 355 (մաս 1), թ. 230: Մեքենագիր:
թ. 229 – նույնի անգլերեն օրինակը:

53 **Էյրե Ա. Գրով** – Փարիզի խաղաղության համաժողովի բրիտանական պատվիրակության գործիչ: